

Վիճակագրական արտադրանք – Գյուղատնտեսական արտադրանքի շուկայականացման մակարդակը և իրացումն ըստ ուղղվածության – տարեկան

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
Կարիքների ձևակերպում		
	1.1 Կարիքների բացահայտում	Պարբերաբար իրականացվում է հարցաթերթում (որի միջոցով գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7480 /2018թ. հունվարի 1-ից 12090/ անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններից հավաքվում է տեղեկատվություն) ընդգրկված ցուցանիշների ցանկի արդիականացում (լրամշակում, փոփոխում) կապված վիճակագրական տեղեկատվության նկատմամբ օգտագործողների պահանջարկի փոփոխության հետ:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Տեղեկատվության հավաքման գործընթացի հետ կապված աշխատանքային քննարկումներ են իրականացվել ինչպես Արմստատի մարզային վարչությունների աշխատակիցների և վիճակագրական տեղեկատվությունը հավաքող վիճակագիրների, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործող հանդիսացող ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մասնագետների հետ:
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	Պարբերաբար ուսումնասիրվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջմունքների ուսումնասիրման հետ՝ ինչպես հեռախոսազանգերի, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=131 հղումը):
	1.4 Հասկացությունների որոշում	-
	1.5 Տվյալների առկայության ստուգում	Գյուղատնտեսական արտադրանքի շուկայականացման մակարդակի և իրացման ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային եղանակով (գյուղատնտեսության վիճակագրության

		ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7480 /2018թ. հունվարի 1-ից 12090/ անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններից): Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ հավաքված տեղեկատվությունը համեմատելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	Մինչև ՀՀ ՎՊԽ կողմից անհատական որոշումով հարցաթերթի հաստատումը, իրականացվում է դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգի մասով աշխատանքային քննարկումներ Արմատատի մարզային վարչությունների աշխատակիցների և վիճակագրական տեղեկատվությունը հավաքող վիճակագիրների հետ, հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը:
	Նախագծում	
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 18-ի «Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը» թիվ 3 (տարեկան) հարցաթերթը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 34-Ա որոշման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	Վիճակագրական ցուցանիշների հավաքման համար կազմված հարցաթերթը տարեկան պարբերականությամբ է և ներառում է 84 վիճակագրական ցուցանիշ:
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից անհատական որոշմամբ հաստատված հարցաթերթի միջոցով: Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային եղանակով (գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7480 /2018թ. հունվարի 1-ից 12090/ անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններից):

	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայականացման մակարդակի և իրացման ուղղությունների վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով: Տեղեկատվությունը տրամադրում են գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7480 /2018թ. հունվարի 1-ից 12090/ անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները: Ստացված տեղեկատվությունն ամփոփվում է ըստ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների, մարզային կտրվածքով:</p>
	<p>2.5 Մշակման վերլուծության նախագծում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնողների (վիճակագիրների միջոցով տնտեսություններից ևս մեկ անգամ տրամադրված տեղեկատվության ճշգրտում) հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ: Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ առկա տեղեկատվությունը համեմատելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ:</p>
	<p>2.6 Արտադրության համակարգերի գործընթացի նախագծում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես մարզային վարչությունների աշխատակիցների և վիճակագիրների հետ տարվում են բացատրական և հրահանգավորման աշխատանքներ:</p>
<p>Կառուցում</p>		
	<p>3.1 Հավաքման գործիքի կառուցում</p>	<p>Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ հարցաթերթերի, դրանց լրացման հրահանգների հասանելիության ապահովման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ (տես՝ https://www.armstat.am/am/?nid=547 հղումը):</p>
	<p>3.2 Գործընթացի</p>	<p>Առկա են տեղեկատվության ստուգաձևման համար</p>

	<p>բաղադրիչների կառուցում և ամրապնդում</p>	<p>անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթում առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:</p>
	<p>3.3 Տարածման բաղադրիչների կառուցում և ամրապնդում</p>	<p>Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ տարեկան պարբերականությամբ:</p>
	<p>3.4 Գործընթացների կարգավորում</p>	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ, 3. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով, 4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ, 5. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
	<p>3.5 Արտադրության համակարգի փորձարկում</p>	<p>Պայմանավորված հարցաթերթում ցուցանիշների փոփոխությունների հետ, մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթը պարբերաբար ենթարկվում է համապատասխան փոփոխությունների: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային ապահովման միջոցների թեստավորում:</p>
	<p>3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում</p>	<p>Վիճակագրական նոր ցուցանիշների հարցաթերթում ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է ցուցանիշի ընկալման փորձարկում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողի հետ:</p>
	<p>3.7 Արտադրության համակարգի վերջնականացում</p>	<p>Իրականացվում են հարցաթերթում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողին (ռեսպոնդենտին)՝ միաժամանակ օգտագործելով նաև վիճակագիրների և մարզային վարչության աշխատակիցների հետ համապատասխան մասնագետների բանավոր և էլեկտրոնային փոստի միջոցով շփումները:</p>

Հավաքում		
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային եղանակով: Տեղեկատվությունը տրամադրում են գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7480 /2018թ. հունվարի 1-ից 12090/ անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները: Ստացված տեղեկատվության արդյունքում ձևավորվում է տեղեկատվության գլխավոր համակցությունը, որն իր մեջ ներառում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայականացման մակարդակի և իրացման ուղղությունների վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվություն:
	4.2 Հավաքման կազմակերպում	Վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա միավորներից տեղեկատվության հավաքման համար կազմված համապատասխան հարցաթերթի և դրա լրացման հրահանգի տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում ըստ մարզերի և ընտրանքում ընդգրկված համայնքների: Առկա են էլեկտրոնային եղանակով հարցաթերթի հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցներ:
	4.3 Հավաքման իրականացում	Սկզբնական վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է վիճակագիրների կողմից տնտեսություններ այցելելով, այնուհետև ՀՀ Արմատատի մարզային վարչությունների (ներկայացնում են մարզի ամփոփ տվյալներ), միջոցով՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման:
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով:
Մշակում		
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է Արմատատի կողմից հավաքվող տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:

	5.2 Դասակարգում կողավորում	և Իրականացվում է մարզային և տարածքային միավորների կողավորում՝ համաձայն նախապես սահմանված կարգի:
	5.3 Վերանայում հաստատում	և Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաձշտում, ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնողների (մարզային վարչության աշխատակից, տարածքային բաժանմունքի աշխատակից և վիճակագիր) հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ: Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ նշված կտրվածքով տեղեկատվությունը համեմատելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ:
	5.4 Խմբագրում իմպուտացիա	և Իրականացվում է բացակայող տեղեկատվության համալրում հիմնականում այլ տնտեսությունների (հնարավոր է նաև ընտրանքից դուրս տնտեսությունների ներգրավում) կողմից տրված գնահատականների հիման վրա՝ դրանց վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվության բացակայության դեպքում:
	5.5 Նոր փոփոխականների միավորների ձևավորում	և Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	Քանի որ հավաքվող տեղեկատվությունն ապահովում է այդ ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման: Նախնական տվյալները վերանայվում են ճշգրտումների և այլ ստուգաձշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են

		տարեկան հրապարակումներում:
Վերլուծություն		
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների խմբավորումների, ինդեքսների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում: Մասնավորապես հաշվարկվում են գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների շուկայականացման մակարդակը և իրացման ուղղությունները Ստացված ցուցանիշների հաշվարկը օգտագործվում է ցուցանիշների դինամիկ շարքերի կառուցման համար, ինչպես նաև հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության միջին կշռված մակարդակի հաշվարկման համար:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և հարցաթերթի լրացման հրահանգի:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ ելնելով ոլորտում տեղի ունեցող գործընթացներից (վարվող քաղաքականությունը) ու հաշվտու տարվա բնակլիմայական պայմաններից:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց զերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ http://www.armstat.am/file/doc/99454478.pdf հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է ոլորտը (գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների շուկայականացման մակարդակները և դրանց իրացման ուղղությունները) բնութագրող ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի:
Տարածում		

<p>7.1 Ելքային համակարգերի արդիականացում</p>	<p>Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների, տեղեկագրերի պատրաստում և վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:</p>
<p>7.2 Տարածման արտադրանքների արտադրում</p>	<p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի, վիճակագրական ժողովածուների, տեղեկատվական ամսական զեկույցների, վիճակագրական տեղեկագրերի միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> 1. «Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից» տեղեկագիրը 2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (տես՝ https://www.armstat.am/am/?nid=586 հղումը): 3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2203 հղումը): 4. Հայաստանը թվերով (տարեկան) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2219 հղումը): 5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ամսական) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=82 հղումը):
<p>7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության</p>

		փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմատտի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:
	7.4Տարածման արտադրանքների խթանում	Արմատտի պաշտոնական կայքում ներկայացված տարատեսակ տեղեկատվությունը (ցուցանիշներ, մեթատվյալներ, իրազեկումներ, ոլորտի վերաբերյալ նորություններ, տվյալների բազաներ և այլն) ոչ միայն միջոց է վիճակագրական, այլ նաև՝ Արմատտի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, ինչը խթանում է ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացմանը:
	7.5Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ հաշվարկ (անհրաժեշտության դեպքում) և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով սկզբնական վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
Գնահատում		
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	-
	8.2 Գնահատման իրականացում	-
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	-